

դասարանին հինգ տարուան ծախքը՝ 5000 ոսկի, վեհանձն ու սիրայօժար նուիրատուութեամբ հոգաց ողբացեալ Տիար Պատրիկ Կիւլպէնկեան, Ազգ. բարերարը, որուն Հայ Եկեղեցիին ու ազգին հանդէպ ունեցած սէրն ու հայրենանուէր զգացումներն ամենուն յայտնի են:

Ե. Նորուէն Նախակրթարան.— Նախակրթարանի ու Մանկապարտէզի սաներն են քաղաքացւոց և Ս. Յակոբեանց վանքին մէջ ընակողներուն պղտիկներն. առաջիններն անոնք են որ հինէն ի վեր ձրիաբար կը բնակին այն տուներուն մէջ որ իրենց յատկացուած են, իսկ վերջինները տարագրութեան առթիւ Երուսաղէմ մնալով կը պատսպարուին Ս. Յակոբեանց մօտի ուխտաւորական թաղերը: Վանքը կու տայ ձրի կրթութիւն, ինքը կը հոգայ վարժարանի բոլոր ծախքերը և որոշ ծրագրով մը ոյժ կու տայ կրօնի ուսման, հայերէն լեզուի, անգլիերէնի, գծագրութեան, ձեռագործի եւայլն: Շնորհիւ վանքին կողմէն տրուած նախակրթութեան աշակերտները կը պահեն հայերէն լեզուն և հայերէն կրնան խօսիլ իրենց տուներուն մէջ, վասն զի քաղաքը արաբխօս ըլլալով՝ նոյնպէս քաղաքացի հայ ընտանիքներն ալ սովորաբար արաբերէն կը խօսին, բայց պէտք է զխանալ թէ շնորհիւ նախակրթարանի հայերէնն ալ սորված են ու կրնան խօսիլ:

Մանչերու Մեսրոպեան հին դպրոցի մասին վերև ծանօթութիւն մը տուինք. կը մնայ այժմ նկարագրել աղջիկներու հին նախակրթարանը որ կը կոչուէր Գայխանեան, եւ յարակից ունէր մանկապարտէզ մը: Գայխանեան դպրոցը Ս. Հրեշտակապետ տանող ճանապարհին վրայ, Պաղչէ թաղին մօտ ինքնուրոյն շինուածք մ'էր որ կառուցուած էր 1862ին Նոր Նախիջեւանցի Շուլտովեանց Կարապետի ծախքով:

1927ի Պաղեստինի ահուելի երկրաշարժը մեծ վնասներ պատճառեց, ինչպէս քաղաքին և շրջակայից, նոյնպէս մեր Ս. Յակոբեանց, Բեթղեհէմի, Ռէմլէի վանքերուն, կալուածներուն եւ այլ հաստատութեանց. այդ վնասուած շէնքերէն մին էր աղջկանց նախակրթարանը իր մանկապարտէզով, որ վտանգաւոր կերպով խարխլած էր եւ կարելի չէր աշակերտուհիներուն ու մանկապարտէզի փոքրիկներուն յաճախել, եւ անոնց համար